

ՎԱՐՍԱԿԻՉ ՀԻՒՍՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ ¹⁾

Խօլերա:

Ասիական խօլերան, որ Ասիայում, առաւելապէս Հնդկաստանում, վաղուց արդէն տեղական հիւանդութիւն է, Եւրոպայում միայն ներկայ դարում երևեցաւ կամ Պարսկաստանի վրայով Ռուսիա և Բալքանեան երկրները մտնելով և մի երկրից միւսը տարածուելով և կամ շոգեւանների միջոցով ներմուծուելով ծովային Նաւահանգիստները, Նա Եւրոպայի շատ կողմերում էպիդէմիա առաջ բերեց, որ ոչնչացաւ մի քանի տարուց և յետոյ դարձեալ բերեցիս՝ նորից երևաց. թէ այս հիւանդութիւնն ինչ ամայութիւն է սփռում, ցոյց է տալիս այն հանգամանքը, որ 1892 թ. խօլերային էպիդէմիայի ժամանակ Ռուսիայում հիւանդացան 550,000 հոգի և մեռան 260,000. փոքրիկ Համբուրգ նահանգում մի քանի շաբաթում հիւանդացան մօտ 18,000 հոգի և մեռան 8000:

Ծանր դէպքում խօլերան հետեւեալ նշաններով է արտայայտւում. հիւանդութիւնն յաճախ արդէն խօլերայի սերմն ընդունելուց յետոյ մի քանի ժամից, խիստ մեծ մասամբ մի քանի օրից երևում է սաստիկ փսխելով և լուծողութեամբ. արտաթորութիւնը, որ հետզհետէ աւելի ու աւելի արագանում է, շուտով անգոյն է դառնում, ջրալի և նման ալրաջրին կամ եփած բրնձի քամած ջրի և մարմնից դուրս է խլում այնպիսի մեծ քանակութեամբ հեղուկ նիւթեր, որ մէզ գոյանալը դադարում է, մորթը չորանում է և ձգւում է մեծ ծալ-

¹⁾ Ցես «Լումայ» 1898 թ. գիրք Ա:

քերով, որոնք դժուարութեամբ են ուղղուում: Միևնույն ժամանակ մկանունքները և առաւելապէս սրունքները կծկուում են և ցաւ պատճառում, արագ կերպով ուժաթափութիւնն աւելանում է և հիւանդը բոլորովին անտարբեր է դառնում դէպի ամեն ինչ, որ կատարւում է իւր հետ կամ իւր շուրջը և յաճախ արդէն մի քանի ժամից յետոյ այդ դրութեան մէջ վրայ է հասնում մահը:

Աւելի պակաս ծանր դէպքերում փսխելը մի քանի ժամանակից յետոյ դադարում է, արտաթորութիւնն աստիճանաբար պակասում է, սովորական յատկութիւն է ստանում և 14 օրից մինչև 3 շաբաթ ժամանակում հիւանդը կարող է կատարելապէս առողջանալ: Այն հիւանդները, որոնք խօլէրայի իսկական հարուածը տարել են, յաճախ յաղթւում են այսպէս կոչուած խօլէրահարէնք (cholera typhoid) հիւանդութեամբ, որ արտայայտւում է տաքութեան աւելանալով և գիտակցութեան թմրելով և որ շատ անգամ անմիջապէս խօլէրայից յետոյ է գալիս:

Այս հիւանդութիւնն ուսումնասիրելու համար գերմանական պետութիւնը 1883 թուին Եգիպտոս և Հնդկաստան ուղարկեց մասնագէտներից բաղկացած մի մասնախումբ. սորա առաջնորդ Բօքերտ Կօխը գտաւ խօլէրայի հիւանդութեան ստորակէտանման բացիլլը (commabacillus), որ այնուհետև հանրածանօթ եղաւ ամենքին իբրև սերմն այդ հիւանդութեան: Այս մանրադիտական կենդանին բարեյաջող հանգամանքների մէջ աճում է շատ արագ և նոյն եղանակով է տարածւում, ինչպէս հարինքի սերմը, մանաւանդ, ինչպէս որ փորձից յայտնի է, մեծ մասամբ խմելու և գործածական ջրի միջոցով:

Այս հիւանդութեան տարածման առաջն առնելու համար հիւանդին աւելի խիստ կերպով պէտք է առանձնացնել և ախտահանել, քան տիֆի ժամանակ. մանաւանդ պէտք է անվնաս դարձնել ոչ միայն հիւանդի աղիքների արտաթորութիւնը, այլ և նրան շրջապատող բոլոր անձանց, որոնք թերևս արդէն վարա-

կուած կարող էին լինել, որովհետեւ փորձը ցոյց է տալիս, որ խօլէրայի վարակիչ նիւթը շրջապատող անձերից էլ, եթէ նոքա նոյն իսկ հիւանդ էլ չեն երևում, այնուամենայնիւ կարող է անցնել ուրիշների վերայ, որոնք լետոյ ծանր կերպով հիւանդանում են:

Խօլէրայից դեռ ազատ մնացած երկրներում այդ հիւանդութեան ներմուծելու առաջն առնելու համար՝ խօլէրայով բռնուած երկրներից եկող մարդիկ ենթարկւում են մի քանի օրուայ հսկողութեան, առանց յարաբերութիւնը կտրելու. իսկ առանձնացնում են միայն հիւանդանալու դէպքում: Հսկողութեան աւելի խիստ միջոցներ են գործ դրւում, երբեմն նաեւ իսպառ կտրում են հաղորդակցութիւնը անտուն մարդկանց կամ թափառականների և այն մարդկանց Վերաբերութեամբ, որոնք իրանց սովորութեան կամ պարապմունքի շնորհիւ աստանդական կեանք են վարում, որովհետեւ նոցա միջոցով հիւանդութիւնը, ինչպէս փորձից յայտնի է, հեշտութեամբ է տարածւում: Բացի սորանից հիւանդութեան վախ ունեցող երկրներում արգելւում են ժողովրդական տօներ, տօնավաճառներ, ուխտագնացութիւններ և այլն, որովհետեւ այդ հանդէսներում խմբուած մարդկանց միջոցով, ինչպէս յայտնի է բազմաթիւ փորձերից, յաճախ հիւանդութիւնը շատ է տարածուել: Ապրանքներից ոչէտք է արգելել միայն կաթի, բանեցրած փոխնորդի և անկողնի, հին կամ հազած շորերի և ցընցոտիների ներմուծումը: Աւելի օգտակար եղան ջրային ճանապարհների վերայ հիմնած վերահսկող կայարանները, որոնք գտնւում են բժշկի առաջնորդութեան տակ, շոգենաւերի վերայ ծառայողներին հսկելու համար, որոնց միջոցով գլխաւորապէս տարածւում է խօլէրան: Այս հաստատութիւնը օգտակար համարեցին և միւս տէրութիւնները և առաջարկեցին ընդհանուր դործածութեան համար Դէքդէնում 1893 թուին եւրոպական շատ տէրութիւնների կողմից կայացած որոշումով, որ տեղի ունեցաւ խօլէրայի դէմ մաքաւելու համար: Այս բոլոր միջոցները աւելի յաջողութիւն կունենան այն ժամանակ, երբ լաւ հսկեն տների, գիւղերի և քաղաքների մաք-

րութեան վերայ առ հասարակ, աղբը նպատակալարմար կերպով հեռացնեն և խմելու համար առողջարար ջուր գործ դնեն:

Խօլէրայի ժամանակ պէտք է կանոնաւոր կեանք վարել, ի զուր տեղը գործ չդնել նախազգուշացնող միջոցներ և հիւանդանալու երկիւղից բնակութեան տեղը չփոխել: Ուր որ ջուրն այնքան էլ լաւ չէ, պէտք է միայն եռցրած ջուր խմել: Պէտք է զգուշանալ պաղպաղակից, գարեջրից, հում կաթից և առհասարակ այն տեսակ ուտելիքներից, որոնք կարող են մարսողութիւնը խանգարել: Ուտեստի նիւթերը պէտք է առնել միայն յայտնի մաքուր խանութներում և խոյս տալ խօլէրային տներում գտնուած խանութներից: Չպէտք է լողանալ այն գետերի ու առուների ջրում, որոնց մօտ նկատուած է խօլէրային հիւանդութիւն և միայն ծայրայեղ կարևոր դէպքում օգտուելու է հասարակական արտաքնոցներից. արտաքնոցների նստակները ամեն օր պէտք է սապնաջրով լուացուին, իսկ եթէ գործ են ածել հիւանդներ՝ կրաջրով: Մարսողութեան խանգարուելու դէպքում պէտք է անմիջապէս դիմել բժշկին:

Արհնային լուծողութիւն:

Աղիքների համաճարակ հիւանդութիւններին է վերաբերում և արհնային լուծողութիւնը: Սա մի շատ տարածուած հիւանդութիւն է, որ չափազանց շատ է պատահում մանաւանդ հարաւային երկրներում և տարուայ որոշուած ժամանակ կրկնւում է: Այդ հիւանդութեան ժամանակ հիւանդի հաստ և առանձնապէս ուղիղ աղիքի մէջ յայտնւում է բորբոքում: Հիւանդները սաստիկ ջրմում են և տանջւում են շուտ շուտ լուծելու պահանջ զգալով. արտաթորութիւնը խիստ ցաւեր է պատճառում և նորա հետ խառն է լինում մաղաս, թարախ և արիւն: Ամենայաջող հանգամանքներում հիւանդն առողջանում է 2—3 շաբաթից, իսկ երբեմն աւելի ուշ. ծանր դէպքերն երբեմն նաև մահ են պատճառում: Որքան յայտնի է, այս հիւանդութեան վարակման նիւթը տարածւում է հիւանդների արտաթորութեամբ. այս հիւանդութեան

տարածման դէմ կարելի է գործ դնել նոյն միջոցները, ինչ որ և ստամոքսի տիֆի դէմ:

Դիֆտերիա: Կրուպ: Նշիկների բորբոքումն:

Դիֆտերիաը այնպիսի վարակիչ հիւանդութիւն է, որ ոչ միայն երեխաների համար զարհուրելի է, այլ և վտանգաւոր է մեծերի համար. 1882 թուից մինչև 1891-ը Գերմանիայի 10 միլիոն բնակիչ ունեցող մեծ քաղաքներում դիֆտերիայով մեռնողների թիւը հասնում էր 111021-ի և 1000 մեռնողից մօտ 45-ը դիֆտերիայով էր: 1892 թ. դիֆտերիայով մեռան 12,361 հոգի, միջին թուով՝ 1000 մահուան դէպքից՝ 41-ը:

Հիւանդութիւնն սկսւում է ջերմով և սոսորդի ցաւով. կարմրած և ուռած նշիկների վերայ երևում են գորշ սպիտակ բծեր, որոնք շուտով ծածկւում են փառով, որը շուտով անցնում է կաւիկի և սոսորդի պատի վերայ: Միևնոյն ժամանակ լզլի վերայ ուռչում են աւշային դեղձերը, քիթը կալնւում է և հիւանդի արտաշնչած օդը վատ հոտ է ստանում: Մի քանի օրից յետոյ հիւանդը կամ մեռնում է սրտի գործունէութեան թուլութիւնից և կամ խեղդւում է կոկորդի և շնչափողի մաղասամաշկի վերայ հաւաքուող փառերից: Ուրիշ դէպքերում հիւանդները մեռնում են հետևող հիւանդութիւններից, այն է՝ թոքերի, երկամուկներէի բորբոքումից, կաթուածից, իսկ բժշկուելու դէպքում՝ հիւանդների առողջութիւնը չափազանց խանգարւում է, իսկ կոկորդի մկանների կաթուածից յետոյ կարող է ձայնը կերկերուել կամ իսպառ կորչել:

Դիֆտերիայի փառերը գոյանում են կոկորդի և շրնջափողի ներսը երբեմն և առանց սոսորդի նախընթաց հիւանդութեան, առաջ է գալիս շնչառութեան դժուարութիւն և խեղդուելու երևոյթներ, որ կոչւում է *կրուպ*: Իսկական կրուպը տարբերւում է կեղծից նրանով, որ վերջինս ներկայացնում է շնչառութեան անցքերի կատարրային հիւանդութիւն մաղասամաշկի ուռուցքով և խեղդուելու համանման երևոյթներով, սակայն առանց փառ գոյացնելու:

Դիֆտերիայի ամեն մի հիւանդութեան մահ է ըս-

սլառնում, բայց բժիշկը կարող է հեռացնել վտանգը, մանաւանդ խեղդուելու ժամանակ, կոկորդը դրսից կրտրելով, որի օգնութեամբ օդը անարգել մտնում է թոքերի մէջ, սակայն այս էլ ամեն անգամ չէ փրկում հիւանդի կեանքը, որովհետեւ դիֆտերիաը սպանում է ոչ թէ միայն խեղդելով, այլև թունաւորելով ամբողջ մարմինը¹⁾։ Ամեն տարի առաջարկում են դիֆտերիաի դէմ շատ նոր նոր դեղեր, բայց, տարաբաղաբար, նոցա մեծ մասը շատ հեռու են նպատակաւարմար լինելուց և մեծ մասամբ (մանաւանդ խորհրդաւորները) թեթևամիտ ամբոխին խաբելու համար են։ Վաճառողների մատնացոյց արած յաջող հետեանքների հիմքն այն է, որ նոքա դիֆտերիաը շփոթում են թեթև և նրա նման հիւանդութիւնների հետ և մանաւանդ նշիկների բորբոքման զանազան ձևերի հետ։

Նշիկների բորբոքումը յաճախ նոյնպէս սկսւում է բարձր տաքութիւնով, նշիկների կարմրելով և չտփազանց ուռոյցով, և այդ ժամանակ կարող է գոյանալ դոցա վերայ և սպիտակագոյն փառ։ դիֆտերիաի նման։ Մի քանի դէպքերում նշիկների ներսը թարախ է գո-

1) Ներկայումս դիֆտերիաը յաջողութեամբ բժշկում են մորթի տակը սրսկելով այնպիսի կենդանիների արեան շիճուկը, որոնց պատուաստելով դիֆտերիաի թոյնով դարձրել են անընդունակ (immun) դիֆտերիաով հիւանդանալուն։ Այս միջոցը առաջարկուած է Behring-ի կողմից. Roux-ի խորհրդով այս շիճուկը պատրաստում են ձիուց, որին համեմատաբար աւելի հեշտ է անընդունակ դարձնել դիֆտերիաին և շատ շիճուկ է տալիս։ Այս նոր միջոցի գործադրութեան ժամանակ դիֆտերիաով մեռնողների թիւը երկու և մինչև երեք անգամ պակասում է (Roux-ի փաստերով Պարիզի մանկական հիւանդանոցում 1890—93 ին՝ 3971 դիֆտերիաով հիւանդ երեխաներից մեռել են 2029 այսինքն $41\frac{0}{10}$, իսկ 1894-ին, երբ սկսեցին շիճուկը գործադրել, 448 հիւանդից մեռան 109, այսինքն $23,5\frac{0}{10}$)։ Որքան շատ գործ դնեն այս միջոցը՝ այնքան աւելի մեծ յոյս է լինում առողջանալու։

յանում և եթէ ժամանակին չեն կտրում շատ ցաւերով ինքն իրան կամաց կամաց բլչում է: Բացի հազուադիւս դէպքերից, նշիկների բորբոքումը մի քանի օրից անցնում է, չթողնելով ոչ մի հետեանք:

Փորձը ցոյց է տուել: որ նշիկների հասարակ բորբոքումը կարող է փոխուել և ուրիշներին, սակայն դիֆտերիտը վարակիչ է առաւել մեծ չափով: Դիֆտերիտի սերմերը մեծ մասամբ գտնւում են հիւանդի սոսորդի փառերում, այնտեղից ընկնում են բերանը և քիթը և խորիխի ու մաղասի հետ բնակարանում, փոխնորդների, շորերի և ուրիշ իրերի վերայ՝ չորանալով կարող են երկար ժամանակ պահպանել իրանց վարակիչ լատկութիւնը և առաջ բերել նոր հիւանդութիւններ:

Դիֆտերիտի տարածման առաջն առնել կարելի է նորի միջոցներով, որոնք դործ են դրւում քութէշի դէմ. մանաւանդ հարկաւոր է առանձին ուշադրութիւն դարձնել հիւանդի խորիք և նոցա գործածած թաշկինակները իսկոյն ախտահանելու վերայ. այդպիսի հիւանդին համբուրելը խտիւ արգելւում է:

Կապոյտ հագ:

Այս վարակիչ հիւանդութիւնը ստանում են համարեա բացառապէս 10 տարեկանից փոքր երեխաներ: Հիւանդութիւնն սկսւում է շնչափողի հասարակ կտարրով, մի շաբաթից յետոյ սկսւում է տևական և սաստիկ հազ, որի ժամանակ դէմքը կապտում է և երեխաներն սկսում են շնչասպառ լինել: Ամեն անգամ այդպէս հազալուն հետևում է սովորաբար ծանր սուլոցով շնչառութիւն: Հիւանդները արտադրում են քիչ խորի, բայց յաճախ խիստ հազից յետոյ ործում են: Այս հազը, որ երեխաներին քնել չէ թողնում, մի քանի ժամանակից յետոյ դանդաղանում է և թեթևանում և վերջապէս բոլորովին կտրում. ծանր դէպքերում մանաւանդ թոյլ երեխաները երբեմն մեռնում են նուազութիւնից կամ երբ այդ հիւանդութեան հետևում է թոքերի բորբոքում:

Կապոյտ հագի վարակիչ նիւթը, ըստ երևութին, գտնւում է խորիխի մէջ: Այս հիւանդութիւնը հեշտու-

Թեամբ անցնում է կամ ուղղակի հիւանդից առողջին, կամ թաշկինակի և այլ առարկաների միջոցով: Ուստի և կապոյտ հագով հիւանդ երեխաներին բոլորովին պէտք է առանձնացնել և մանաւանդ չուղարկել ուսումնարան: Նոցա փոխնորդը ամենից հեշտ ախտահանում է երկար եփեղով ջրի մէջ:

Ինֆլիւէնցա:

Ինչպէս կապոյտ հագը, ինֆլիւէնցան էլ կամ գրիպը գլխաւորապէս բռնում է շնչառութեան գործարաններից: Ինֆլիւէնցան արդէն մի քանի անգամ անցաւ ամբողջ Եւրոպան և վարակեց բնակիչների մեծ մասին: Վերջին մեծ համաճարակը սկսուեց 1889 թուին: Այս հիւանդութիւնն սկսում է վարակիչ նիւթի մէկից միւսը անցնելով, բայց չէ կարելի չխոստովանել, որ նորա տարածման պակաս չեն օգնում ուրիշ այլևայլ պայմաններ, որոնց մէջ առաջին տեղը բռնում է վատ եղանակը և մթնոլորտի անբարեյաջող ազդեցութիւնները: Գրիպը արտալայտում է աւելի կամ պակաս ջերմով, խիստ թուլութեամբ, մարմնի զանազան տեղերի ցաւով և սաստիկ գլխացաւով: Սովորաբար այդ հիւանդութեան ժամանակ լինում են մերթ խորի արտադրող հազ, մերթ ստամոքսի ու աղիքների կտտարը, երբեմն էլ վերջապէս մկանների ու ոսկրների յօդային ցաւեր: Մի քանի օրից լետոյ թէպէտ առողջանում է, բայց հիւանդութիւնից լետոյ երբեմն մնում է երկարատեւ ընդհանուր թուլութիւն, մի քանի դէպքերում հետեւում է եւ մահ: Հիւանդութեան անյաջող հետեւանքի պատճառը լինում է առաւելապէս երբ այդ հիւանդութեան միանում են՝ թոքերի բորբոքում, սրտի, ականջների եւ երիկամուկների ցաւեր:

Թոքերի, լանջամաշկի (плевра) եւ ստոծանու (брюшина) բորբոքումն.

Թոքերի բորբոքումը կամ իբրեւ անկախ հիւանդութիւն է երեւում եւ կամ ուրիշ վարակիչ հիւանդութիւնների հետ:

Այս հիւանդութիւնն սկսում է սաստիկ դողով, մարմնի բարձր տաքութեամբ, որի հետ միանում է

կողքի ծակոց, շնչառութեան դժուարութիւն և հազ: Հիւանդներն սկզբում քիչ, իսկ ապա աւելի ու աւելի Zähe (вязкий) արեւնախառն խորիս են արձակում, որի դու: նը երկաթի ժանգի նման է լինում: Նպատակալարմար խնամքի ժամանակ թոքերի բորբոքումը յաճախ առողջա: նում է, չնայելով ծանր դրութեան: Առողջանալն սկսում է մի շաբաթից յետոյ՝ ճգնաժամով. — տաքութիւնը միան: գամից իջնում է, երբեմն բնականից ցած, շնչառու: թեան դժուարութիւնը անցնում է, սրտի ցաւն ու հազը պակասում է: Հիւանդութեան այսպիսի ընթացքում թո: քերի բշտիկների ներսը գոյացած հիւթը քիչ քիչ հա: զով դուրս է բերւում կամ ծծւում է աւշային անոթ: ներից: Ծանր դէպքերում թոքերը թարախակալում են կամ կորցնում են կենսունակութիւնը: Երբեմն հիւանդը մեռնում է հիւանդանալուց մի քանի օր յետոյ, մանա: ւանդ եթէ նա գործ է դրել ոգեւից խմիչքներ կամ թէ շատ ծեր հասակումն է:

Առաջ կարծում էին թէ թոքերի բորբոքումն առաջ է գալիս մրսելուց: Իսկ այժմ համարւում են վարակիչ մի հիւանդութիւն, որովհետեւ ապացուցուած է, որ թէ: պէտ վատ եղանակն էլ նպաստում է հիւանդանալուն, սակայն այդ հիւանդութիւնն այնուամենայնիւ առաջա: ցնում են առանձին կենդանի սերմիկներ (գիպլօկօկի) և ենթադրւում են, որ այս սերմիկները տարածւում են հիւանդի՝ օդի մէջ փռիացած խորխից. նոյնպէս և այդ պատճառով հարկաւոր է ախտահանել այս խորխը, նոյն: պէս և թքամանը, շորերը և նորանից վարակուած այլ առարկաները:

Երբեմն թոքերի բորբոքման միանում է և լանջա: մաշկի բորբոքում (պլէվրիտը), մի հիւանդութիւն, որ յաճախ նկատւում է և առանց թոքերի բորբոքման: Դա կրծքի թաղանթի բորբոքումն է, որը ծածկւում է թոքերը և կրծքի խորշի ներքին երեսը և արտայայտւում է կամ չոր պլէվրիտի ձևով և կամ հեղուկ հաւաքուելով լան: ջախորշում, այսինքն մաշկի և թոքերի միջի տարածու: թեան մէջ և այն էլ յաճախ այնքան մեծ քանակու: թեամբ, որ շնչառութիւնը դժուարանում է կամ բոլո:

րովին կտրուում: Այդ հեղուկը երբեմն լինում է թարախոտ կամ արիւնոտ:

Ստոծանու բորբոքման ժամանակ էլ, որ մեծ մասամբ գոյանում է փորի գործարանների վնասուելուց կամ ցաւերից, ստամոքսի խորշում գոյանում է ջրալի կամ թարախոտ հեղուկ: Այդպիսի հիւանդները յանտանելի ցաւեր են զգում և յաճախ մեռնում են դորանով:

Ուղեղամաշկի համաճարակ բորբոքումն: Ուղեղի բորբոքումն:

Այս հիւանդութիւններից առաջինը վարակիչ է և գլխի ու մէջքի ուղեղը պատող մաշկի բորբոքումն է, որ արտայայտուում է տաքութիւնով, փսխելով, գլխի, մէջքի և ոտ ու ձեռքի սաստիկ ցաւերով, վրի փայտանալով և առանձին մկանների կաթուածով: Այս հիւանդութիւնն երեւում է ձրմեռն ու գարնան, գլխաւորապէս երեխաների ու պատանիների մէջ, որոնց երրորդ մասը մեռնում են. առողջանալու դէպքերումն անգամ կատարելապէս չեն բժշկուում. հիւանդները յաճախ մնում են խուլ, կոյր, անգամալոյծ կամ հոգեկան հիւանդ:

Բոլորովին սորա նման ընթացք է ունենում և ուղեղի ըորընթրումը: Դա լինում է զանազան վարակիչ հիւանդութիւնների կամ գլխի և ականջների ցաւերի ծանր հետեւանքը:

Ցինդ. (болотная лихорадка, malaria).

Այս հիւանդութեան պատճառն էլ միկրոբներն են, բայց վարակիչ նիւթը մարդուց մարդ չէ փոխուում: Տենդը առաւելապէս նկատուում է հեղեղման ենթարկուած ճահճոտ տեղերում և Ռուսիայի ու Գերմանիայի մի քանի տեղերում նա մշտապէս աւերում է: Տաք կլիմայում այս տենդը աւելի շատ է տարածուած և աւելի ծանր հոսանք ունի (արեադարձային տենդ):

Ճահճային տենդը արտայայտուում է մեզ մօտ տաքութեան չափազանց աւելանալով, որ տևում է մի քանի ժամ շարունակ: Այս դրութիւնը կարող է կրկնուել ամեն օր, օրամէջ, երկու և մինչև անգամ երեք օրը մի անգամ և սկսում է մեծ մասամբ ցնցող դողով, որին հետևում են տաքութիւն և քրտինք: Այս երևոյթները

կրկնուելուց կարող է տուժել հիւանդի առողջութիւնը. նոքա կորցնում են գոյնը, թուլանում, դառնում են սակաւարիւն կամ ուրիշ հիւանդութիւններ են ստանում: Այս երևոյթների փոխանակ երբեմն տենդը արտայայտուում է ջղային խիստ ցաւերով, մանաւանդ ճակատին, որ նոյնպէս լինում է ընդհատումներով: Այս հիւանդութիւնը մեծ մասամբ անցնում է քինալով, որ ստացուում է հարաւային Ամերիկայի քինալի ծառից, կամ բժշկի ցուցմամբ ուրիշ միջոցներով: Նահանգները և խոնաւ տեղերը ցամաքացնելով, դետակները մաքրելով և առողջապահական ուրիշ միջոցներով լաջողել է շատ տեղերում աղգաբնակութիւնը բոլորովին ազատել այս մաշիչ հիւանդութիւնից:

Քիզին տենտ եւ ժանտախտ.

Այս վտանգաւոր հիւանդութիւնների հայրենիքը գտնուում է մեր ցամաքից դուրս: Դիւղին տննողը գլխաւորապէս պատահում է Միջին և Հարաւային Ամերիկայի ծաղափնեայ տեղերում և Արեւմտեան Աֆրիկայում. ծովային յարաբերութեան զարգանալու հետ՝ սպասւում է, որ զիզին տենդը մեր ցամաքն էլ կմուծուի: Այս հիւանդութիւնն արտայայտուում է խիստ տաքութիւնով, գլխի ու գոտկատեղի ցաւերով, մորթու և աչքերի դեղնութեամբ, արիւն փսխելով, ցնորքներով և ուղեղի գրգռմունքով ու սովորաբար շարունակւում 10 կամ 12 օր, եթէ հիւանդը աւելի առաջ է մեռնում: Առողջանալը երկար ժամանակ է պահանջում:

Ժանտախտը ներկայ դարում միայն երեւաց Հիւսիսային Աֆրիկայի և Արեւմտեան Ասիայի մի քանի եղերային երկրներում, 1879 թուին և Ռուսիայի հարաւում. իսկ նորերս և Չինաստանում. ժանտախտի ամեն երեւալը սոսկայի ամայութիւն է առաջ բերում: Նախկին դարերում ժանտախտը համաճարակ տարածւում էր և Եւրոպայում և ռեցաւ, որ ըստ երեւութին նմանութիւն ունի այժմեան ժանտախտի հետ, անասելի սարսափ տարածեց: Նորա նշաններն են. բարձր տաքութիւն, գիտակցութեան կորուստ և վզի, կոնատակերի և աճուկների խուլների ուռչելը, որոնք կարմրում են, թարախոտում են, տրաքւում և փթում: Հիւանդացողների մեծ մասը մեռնում են հիւան-

դուժեան առաջին շաբաթում: Դեղին տենդն ու ժանտախտը փոխադրուում են ինչպէս մարդուց մարդու վերայ, այնպէ՛ էլ շորերի և այլ իրերի միջոցով:

Վէրքի հիւանդութիւններ.

Այս անուանով կոչուում են մի շարք վարակիչ հիւանդութիւններ, որովհետեւ նոքա կապ ունին մորթու վնասուելու հետ. այս հիւանդութիւնների նիւթը գրտընում է փոշու, ցեխի կամ անմաքուր ջրի մէջ: Վէրքի վարակուելու առաջն առնում են նորան ոչինչ չդիպցնելով, խնամքով մաքրելով նորա շորս կողմի կաշին և փաթթելով միայն ախտահանած, այսինքն հիւանդութեան սերմերից ազատ իրերով (զղարշ, բամբակ և այլն): Վէրքը փաթթելուց առաջ վիրաբույժները մաքուր կտաւի շորեր են հագնում, ձեռները լաւ լուանում են սապնով և վրձինով և եղունգների կեղտերը հեռացնում: Վէրքը փաթըթելու նիւթերը պէտք է մաքուր պատրաստուած լինին, ուելի լաւ է գնել դեղատնից, ամեն անգամ ծրարից թարմ հանել և դնել վէրքի վերայ այն երեսով, որին ձեռը չեն տուել: Վէրքից վերցրած փաթեթները պէտք է ալրել և ոչ մի պայմանով չէ կարելի նորից գործ դնել: Թէպէտ շուտով կարելի է դրեթէ ամենքին սովորցնել լրջութեամբ վերաբերուելու վէրքին և սովորցնել վէրքը պատելու եղանակը, սակայն ի նկատի ունելով անմաքութիւնից յառաջացած վտանգը, վէրքի խնամելը պէտք է յանձնել փորձուած և հմուտ անձի: Վէրքի հիւանդութիւններն առաջ աւելի յաճախ էին պատահում, վէրքին կից ջերմն ու բորբոքման երևոյթներն առաջ համարուում էին սովորական և կանոնաւոր, և սոցա համաճարակ տարածումը հիւանդանոցներում՝ մինչև անգամ անխուսափելի: Այն ժամանակից միայն, երբ անգլիացի բժիշկ Լիստէրը նկարագրեց այսպէս կոչուած՝ վէրքերի անտիսեպտիք (վէրքը վարակող նիւթերն ախտահանող եղանակ) բժշկութիւնը, սկսեցին կարեւոր ուշադրութիւն դարձնել ամենախիստ մաքրութեան վերայ և վէրքի հիւանդութիւններն սկսան հազուադէպ երևալ:

Բորբոքումն, թարախակալումը, չիրան (աչք), կարբունկուլ

Ամենայաճախ վերքի հիւանդութիւնն է վերքերի շըրջակայ փափուկ մասերի հասարակ բորբոքումը, որ արտայայտուում է ցաւերով, ուռուցցով, կարմրելով և տաքութիւնով. շատ անգամ էլ դրան միանում է և թարախակալումը. թարախը հաւաքւում է գլխաւորապէս կաշուի տակի հիւռուածքի մէջ, ուտում է նորան և մասամբ կարող է բաւական տարածուել նախ քան թարախը կը բարձրանայ դէպի կաշին և կտրաքուի: Ժամանակին կտրելով այդ ուռուցը՝ կարելի է սահմանափակել թարախակալութեան ժամանակը և տարածուիլը:

Մատնաշունչը (panaritium) գոյանում է լաճախ՝ մատի փափուկ երեսին ամենաչնչին վիրաւորութիւնից և այդպիսի թարախակալութիւնը, եթէ կարգին չբժշկուի՝ կարող է ծանր հետեանքներ ունենալ, այն է՝ ջիւերի փթութիւն, մատների կամ դաստակի փայտացում, ձեռքի թուլութիւն կամ բոլորովին անպէտքանալը, իսկ երբ տարածւում է մերձակայ մասերում՝ վտանգաւոր է դառնում և կեանքի համար:

Թարախի կիտուիլը անուանում են արսցէսս (արсисс). իսկ կաշուի բորբոքումը, որ սկսւում է միկրօրների՝ ճարպագեղձերի մէջ մտնելուց լետոյ, կոչւում է ֆուրունկուլ. եթէ մի քանի ֆուրունկուլ միասին են գոյանում, կոչւում են կարբունկուլ, որ երբեմն վտանգ է սպառնում մարդու կեանքին:

Աւշային անոթների եւ գեղձերի բորբոքում. թարախարին եւ արեան փառութիւն. օննդաջերմ

Աւշային անոթների և գեղձերի բորբոքումը գոյանում է վերքից հիւանդութեան սերմերը նոցա մէջ թափանցելուց: Աւշային անոթներն սկսում են կաշուի վերայ երևալ կարմիր թելերի ձևով, որոնք ձգւում են դէպի աւշային գեղձերը: Գեղձերը ուռչում են, ցաւում և թարախոտւում: Եթէ մանր անոթներից ընկնում են արեան մէջ հիւանդութեան սերմեր, այն ժամանակ կարող է ամբողջ կազմուածքի ծանր հիւանդութիւն ա-

ռաջ գալ, որ ծանօթ է թարախարհունութիւն և արեանփտութիւն անուններով (септицѣмія и піѣмія)։

Ծննդաջերմը, որ պատահում է կնոջ անյաջող ծնընդարերութեան միջոցին, նույնպէս ծագում է, երբ ծննդական գործարաններէ միջոցով արեան մէջ ներս են թափանցում բորբոքում առաջ բերող նիւթեր։ Այս հիւանդութիւնից ազատուել կարելի է ծննդականին խիստ մաքուր պահելով և մանկաբարձի պատուէրները ամենայն ճշտութեամբ կատարելով։

Կարմիր քամի եւ մարմնի սեւանալը (омертвѣніе)։

Կամիր քամին արտայայտուում է վերքի շուրջը կաշուի բորբոքումով, որ որոշուում է ցաւով, ուռուցով և վարդկարմիր գոյնով. այս կարմրութիւնը տարածւում է և կարող է մեծ տեղ բռնել կաշուի վերայ։ Կարմիր քամին սովորաբար սկսւում է դողով ու տաքութիւնով։ Կարմիր քամին, որ ամենից աւելի երեսի ու գլխի վերայ է նկատուում, առաջ մրսելուց գոյացող հիւանդութիւն էր համարւում, բայց այժմ համոզուեցան, որ նորա սկզբնապատճառը կաշուի կամ քթի մաղասամաշկի աննշան վերաւորութիւնն է, որտեղից ներս են թափանցում հիւանդաբեր միկրօբներ։ Կարմիր քամուց համեմատաբար աւելի քիչ են մեռնում. մօտ մի շաբաթից յետոյ տաքութիւնը վերջանում է և հիւանդ տեղերի կաշին թեփոտւում։ Եթէ կարմիր քամին լինում է գլխի մազոտ տեղերը, մազերը թափւում են, բայց յետոյ էլ բուսնում են։ Երբեմն հիւանդութիւնից յետոյ մարմնի առանձին մասերը սեւանում են, որի ժամանակ վերքին մօտիկ հիւսուածքները համարեա՞ սեւանում են և ոչնչանում, երբեմն վալը են թափւում ամբողջ անդամներ, մատներ, ոսկրներ. երբեմն այս հիւանդութիւնը մահ է պատճառում։ Սեւանալը կարող է և ուրիշ պատճառներից պատահել, օրինակ՝ սառելուց, արեան շրջանի խանգարմունքից (սննդատու արիւնային անօթի փակուելուց, ծեր մարդկանց սրտի գործունէութեան թուլութիւնից) և այլն։

Փայտացումն.

Այս հիւանդութիւնն ամենասարսափելիներից մէկն

է համարուում, որովհետեւ սովորաբար վերջանում է մահով և խիստ չարչարանք է պատճառում հիւանդին: Ծամելու, ծոծրակի և կուշ տալու մկանների ցաւալի ցնցումները դժուարացնում են բերան բաց անելը, ծամելը, կուշ տալն ու շնչառութիւնը: Մի քանի ժամանակից յետոյ այս ցնցումները վերջանում են, բայց հիւանդին լոկ դիպչելը, թեթեւ շարժելը և անգամ ձայնով կամ լուսով գրգռելը նորից տանջանքներ է պատճառում:

Աչքի վարակիչ հիւանդութիւններ:

Աչքերի կեղտոտութիւնից կարող է գոյանալ նոցա զօդամաշկի (соединитель. оболочка) բորբոքումն: Այդ թաղանթը կարմրում է, արտասուքն աւելանում, աչքերն սկսում են ցաւել և լուսից խրտնել: Երբեմն աչքերի կոպքերի եզրներին փոքրիկ կարմիր ուռույցներ են գոյանում: Եթէ բորբոքումը զօդամաշկից անցնում է աչքի մէջտեղը, վերջինս վերայ կարող են ստացուիլ այնպիսի հիւանդութիւններ, որոնք իրանցից յետոյ թողնում են անթափանց սպիւններ և բծեր: Ակնաբշտի ներքին մասերի միաժամանակ հիւանդութիւնը կարող է առաջացնել տեսութեան թուլութիւն, կուրութիւն և աչքի կորուստ:

Առանձին ուշադրութիւն պէտք է դարձնել նորածինների աչքերին. նոցա աչքացաւերը գրեթէ միշտ բուժելի են, եթէ ժամանակին խնամք են տանում. հակառակ դէպքում կարող են կուրութիւն առաջ բերել: Ուստի հէնց որ երեխայի աչքերն սկսեն կարմրել, կոպքերը միմեանց կպչել, և աչքի անկիւններում թարախ կամ մաղաս երեւալ, անհրաժեշտ է անմիջապէս բժշկի դիմել: Ցերեկուայ լոյսը առողջ երեխանց աչքերին վրնաս չէ, միայն պէտք է հոգալ որ լոյսը շատ պայծառ չլինի:

«Տրախոմա» կոչուած աչքի վարակիչ հիւանդութիւնը Եգիպտոսից Եւրոպա բերուեցաւ Նապոլէոն Ա.ի զինուորների միջոցով: Այս հիւանդութիւնը անցնում է հիւանդին ձեռքերից, սրբիչից ևայլն: Ուստի պէտք է զգուշանալ այդպիսի հիւանդներին կպչելուց և միայն մաքուր ճերմակեղէն գործ դնել:

Ընտանի կենդանիների վարակիչ հիւանդութիւններ.

Մի քանի վարակիչ հիւանդութիւններ կենդանիներից անցնում են և մարդկանց վերայ, գլխաւորապէս մօտիկ յարաբերութեան ժամանակ կամ կծելու դէպքում: Սոցա վերաբերում են կատաղութիւնը, սիբիրախտը և սապ:

Կատաղութիւն.

Կատաղութիւնն ամենից աւելի շներին է պատահում. այս հիւանդութեան սերմը գտնւում է հիւանդ կենդանիների թուղի մէջ և թքի հետ անցնում է մարդուն կծելով կամ մարդու մորթին լիզելու դէպքում, որի վերայ գրեթէ միշտ լինում է մանր վէրքեր: Վարակուածներից մօտ կէսը ծանր հիւանդանում են, որ երկուսն է 20—60 օր յետոյ, կամ աւելի ուշ, ընդհանուր թուլութեամբ, գլխացաւով, որի հետ միանում է երկիւղի զգացմունքն և կուլ տալու կամ խօսելու դժուարութիւն: Մի քանի ժամից կամ օրից յետոյ յայտնւում են ցնցումներ կուլ տալու և շնչառութեան մկաններում, մանաւանդ կերակրուելիս, իսկ վերջը մինչև անգամ հէնց միայն կերակրուելու կամ կուլ տալու մասին մտածելիս (ջրավախութիւն): Ցնցումներ են պատճառում ամենաթոյլ արտաքին գրգռմունքներ, թափանցիկ քամին, փայլուն առարկայի նայելը, անակընկալ շփումը և այլն: Այս տեսակ ցնցումները յաճախ կրկնուելով խիստ թուլացնում են և մի քանի օրից յետոյ էլ սպանում: Այս հիւանդութիւնից զերծ մնալու համար օգտակար է համարուած ծծել, դուրս կտրել, այրել կամ դեղերով դաղել այն վէրքը, որ ստացուել է կասկածելի կենդանիների կծելուց: Ֆրանսիայում, Ռուսիայում և ուրիշ տեղեր, ուր կատաղութիւնը շուտ շուտ է պատահում, քան Գերմանիայում, հռչակաւոր գիտնական Պաստեօրի ձեռներէցութեամբ բուժարաններ են կառուցուած կծած մարդկանցը պատուաստելու կատաղութեան մեղմացած թոյնով, որ պաշտպանում է այս զարհուրելի հիւանդութեան դէմ:

Սիբիրախոս. Սապ (САПЪ):

Սիբիրախոսը պատահում է գլխաւորապէս ոչխար-
ներին և եղջիւրաւոր անասուններին, աւելի պակաս
խոզերին և մարդկանց. այդ հիւանդութիւնն առաջ են
բերում ձողաձև բացիլներ, որոնք մէծ քանակութեամբ
գտնւում են հիւանդ անասունների արեան և գործա-
րանների մէջ և արհեստապէս էլ կարելի է մարմնից
դուրս աճեցնել առանց վարակիչ ոյժը կորցնելու: Որով-
հետև սիբիրախոսի բացիլը գոյացնում է տեական ծի-
ւեր (սպոր) ուստի և վարակիչ նիւթը շատ երկար է պահ-
ւում և ցամաքած դրութեան մէջ: Մարդ կարող է վարա-
կուել և մսի, եղջիւրի ու մորթու միջոցով, նոյնպէս և
մորթելիս, կաշին հանելիս և նոցա մորթին ու մազե-
րը բանեցնելիս, կամ թէ, վերջապէս, այն միջատի կը-
ծելուց, որ նստած է եղել հիւանդ կենդանու վերայ:

Մարդկանց վերայ այս հիւանդութիւնն երևում է
այսպէս կոչուած սիբիրախոսի կարբունկուլի ձևով, որ
կաշուի սահմանափակ տեղերում շատ խիստ բորբոքումն
է առաջ բերում, գոյացնելով բշտիկներ, սևացում և
ուռոյցներ: Հիւանդութեան նիւթը այս տեղերից փո-
խադրուելով արեւատար անօթները՝ առաջ է բերում
կեանքի համար վտանգաւոր վարակում ամբողջ կազ-
մուածքին և մարմնի չափազանց բարձր տաքութիւն:
Նոյն կերպ հիւանդանում են նոքա, որոնք վարակուել
են սիբիրախոսով հիւանդ կենդանիների միսն ուտելուց,
որի ժամանակ բացի այդ երևոյթներից լինում է սաս-
տիկ որժ և լուծ:

Սապը պատահում է ձիերին և ուրիշ միասմբակ
կենդանիներին և մարդու վերայ անցնում է քթի լոր-
ձունքից, վէրքերի արտաթորութիւնից, նոյնպէս էլ ա-
րիւնից և բոլոր արտաթորութիւններից: Հիւանդու-
թեան սերմերի մտնելու տեղը ուռոյց է գոյանում և
աւշալին անօթների ու գեղձերի բորբոքում: Հիւանդը
տաքացնում է, զգում է ձեռք ու ոտքի ցաւեր, մորթի
վերայ ցան է դուրս տալիս, երևում են կաշուի խորքը
խուլներ, որոնք բացւում են և վէրք են դառնում: Քր-
թում և ներքին գործարաններում կարող են խուլներ և

ուրիշ փոփոխութիւններ գոյանալ: Այս հիւանդութիւնը վաղ թէ ուշ միշտ մահով է վերջանում: Կասկածելի վերքերը ալրելով և դաղելով երբեմն կարելի է լինում այս հիւանդութեան դէմ պաշտպանուիլ:

Սիֆիլիս. բորոտութիւն.

Սիֆիլիսը համարեա՞ միայն ստացւում է հիւանդներից անմիջապէս շփուելուց: Այս չափազանց տարածուած հիւանդութիւնը արտայայտւում է նրանով, որ վարակուած տեղը ուռչում է և պինդ վերք է գոյանում, որ երբեմն աննշմարելի է մնում, ուռչում են նոյնպէս աւշալին գեղձերը և ցան է դուրս տալիս. ապագայում հիւանդութիւնը անցնում է ներքին գործարանների վերայ, ոսկրներում, գլխի և մէջքի ուղեղներում և յաճախ անցնում է որդւոցը ժառանգութիւն: Ամեն հիւանդացող պէտք է իսկոյն բժշկին դիմէ, որովհետեւ բժշկի միջոցով ժամանակին բժշկուելը ոչնչացնում է հիւանդութիւնը և լետ է մղում վտանգաւոր հետեւանքները:

Բորոտութիւնը (Lepra, проказа) առաջ է բերում կազմուածքի աստիճանաբար ծանր թուլութիւն: Այս հիւանդութեան ծագման և տարածման եղանակի մասին մինչև այժմս դեռ կատարեալ տեղեկութիւններ չկան. նա գլխաւորապէս տարածուած է Արևելքում, պատահում է սակայն և եւրոպական շատ երկներում, մանաւանդ Նորվեգիայում, Թիւրքիայում, Իսպանիայում և Ռուսիայում (գլխաւորապէս մերձբալտեան նահանգներում): Գերմանիայում, ուր այժմ հազուադիւտ են բորոտութեան դէպքերը, նախկին ժամանակներում բորոտների թիւն այնքան մեծ էր, որ ամեն մեծ քաղաքներում առանձին հիւանդանոց կար նոցա համար:

Այս հիւանդութեան նշաններն են. կաշուի վերայ դուրս ցցուած խուլեր կամ ցան և ջղալին խանգարում, բայց ապագայում նա վնասում է և այլ գործարաններին և երկարատեւ տանջանքից լետոյ մահ է պատճառում: Բորոտութեամբ բռնուած տեղերում հիւանդացողներին բոլորովին առանձնացնում են առողջներից և սորանով առողջներին նախապահպանում վարակուելուց:

Փնդկախտ (туберкулез)։

Փնդկախտ կամ տուբէրկուլեզ անուանով հասկաց-
ւում է մի շարք արտաքուստ քրօնիքական տեսք ու-
նեցող զանազան հիւանդութիւններ։ Որ այս հիւանդու-
թիւնները մի ընդհանուր սկզբնապատճառ և միատե-
սակ բնաւորութիւն ունին, այդ բանը միջանի տարի
առաջ ապացուցեց Բ. Կօխը, որ գտաւ ստորին գործա-
րանաւոր մի առանձին տեսակ ձողիկ, որը յայտնի է
տուբէրկուլեզի կամ փնդկախտի բացիլլ անունով։ Այս
փոքրիկ կենդանի էակը գտնւում է մարմնի մէջ ամեն
տեսակ փնդկախտային հիւանդութիւնների միջոցին, կա-
րող է մարմնից դուրս երկար ժամանակ պահպանել իւր
կենսունակութիւնը, իսկ նորա ներսը գոյացնում է
մանր փնդիկներ և բորբոքիչ բներ. խուլերն ու բոր-
բոքուած հիւսուածքները տեղ տեղ սպիտակ, չոր պան-
րանման զանգուած են գոյացնում, տեղ տեղ էլ թա-
րախակալում են, փտում և այդպիսով վէրքեր դառ-
նում։ Այս վէրքերը նոր միկրօբների բուռն են կազմում
և սորա ազդեցութեան տակ հիւանդութեան պատկերը
փոփոխւում է զանազան կերպով։

Փնդկախտի ժամանակ գրեթէ միշտ նկատւում է
մաշիչ տաքութիւն, ցերեկով, մանաւանդ երեկոյեան
դէմ, մարմնի տաքութեան նշանաւոր կերպով բարձ-
րանալը, իսկ գիշերը՝ ողորուած քրտինք։ Շատ անգամ
այս հիւանդութիւնը յայտնւում է շատ վաղ առանձնա-
պէս կապ կարմիր թելերով, որի կարմրութիւնը աւելա-
նում է մինչև անգամ ֆիզիքական թեթեւ լարման և
հոգեկան վրդովման ժամանակ։

Փնդկախտի առանձին տեսակներ.

Ամենից յաճախ պատահող ձևը՝ թոքախտն է։ 1887
թուից մինչև 1892 այդ հիւանդութեամբ գերմանա-
կան կայսրութեան մեծ քաղաքների 11 միլիօն բնա-
կիչներից տարեկան 34,443 մեռան, այսինքն հազարին
3 ից աւելի, որ կազմում է բոլոր մահացութիւնների
13⁰/₁₀₀։ 1892 թ. Պ. Բուրգում մեռել են 25191 հոգի,
որից 4286 փնդախտից, այսինքն մօտ 17⁰/₁₀₀։ Դորա ար-
տաքին նշաններն են բացի վերը լիշաճներից, հազը,

խորիւի արտադրութիւնն և շնչարգել: Յաճախ, թոքերի արեւնատար անօթների պատերը ուտուելուց արեանհոսութիւն է պատահում, որ երբեմն վտանգաւոր ծաւալ է ստանում և կարող է մեծ քանակութեամբ արիւնհոսութիւն պատճառել:

Շատ անգամ գնդկախտը պատահում է ոսկրներում: Եթէ գնդկախտից ողները փթում են, այդպիսի դէպքում ծուռում է ողնաշարը և կուզ է դառնում: Վայրընկնելը կամ խփելը կարող է աւելացնել նորան և մէջքի ուղեղի հիւանդութիւն, որի հետեւանքը լինում է ոտների կաթուած կամ միզելու և դուրս գնալու խանգարումն: Ոսկրների գնդկախտին կարող է միանալ յօդերի հիւանդութիւնը, որ սկզբում ցաւ և շարժողութեան խանգարմունք է պատճառում, իսկ այնուհետև յօդերի փտում, ձեռք ու ոտքի կորուստ և հիւանդը կարող է մեռնել:

Փոքր երեխաներին յաճախ պատահում է ուղեղամաշկի գնդկախտ. այս հիւանդութիւնը երեւում է մարսողութեան խանգարմունքով, որին լետոյ շուտով աւելանում է գիտակցութեան կորուստ, ցընցումներ և կաթուած. գրեթէ միշտ այս հիւանդութիւնը մի քանի շաբաթից լետոյ մահով է վերջանում: Ընդհանուր գնդկախտը մահ է պատճառում աւելի շուտով: Դա այն դէպքումն է պատահում, երբ տուբերկուլեզի բացիւնները վարակման բնից փռւում են ամբողջ գործարաններում, առաջացնում են տաքութիւն և մահ: Աղիքների ու փորի գնդկախտը պակաս երկեւղալի է: Մորթու գնդկախտային հիւանդութիւնից պէտք է յիշել պիսակը (Lupus),—волчанка, մի հիւանդութիւն, որ պատահում է գլխաւորապէս երեսի վերայ, և սովորաբար զանազան աւերմունքներ է գործում և ալլանդակում է երեսը, անգամ զրկում քիթից:

խլացաւ (Золотуха), գնդկախտի բժշկութիւնը.

Գնդկախտային բնաւորութեան մի քանի կաշուի թեթեւ հիւանդութիւններ, խուլերի գնդկախտը, աչքերի զոգամաշկիային բորբոքումը, որ որոշում է լամպուութեամբ և կրկնուելու հակումով, և ականջի թարախային գործունէութեան

Թիւնը ընդհանուր անունով կոչուում են խլացաւ Առաջ խլացաւը առանձին հիւանդութիւն էին համարուում, անկախ տուբէրկուլեօզից, որովհետեւ նա գլխաւորապէս երեխաներին է պատահում և սովորաբար յաջող վախճան է ունենում: Իսկ այժմ գնդկախտի ձողիկը գտնելով ընդունեցին խլացաւի նմանութիւնը գնդկախտի հետ և սկսան հաւատալ որ տուբէրկուլեօզը կարելի է բժշկել: Եւ յիշաւ, սակաւ չէ պատահում, որ Թոքախտն անգամ առողջանում է, այդ ապացուցւում է այն անձանց դիակների անդամահատութեամբ, որոնք մեռել են որևէ ուրիշ հիւանդութիւնից, նոցա Թոքերի վերայ գտնելով սպիւններ, որոնք գոյացած էին լաւացած գրնդիկներից: Մինչև անգամ գնդկախտի պարզ նշաններ երևալու դէպքում կարելի է բժշկուել, եթէ ժամանակին բժշկուին և ուշք դարձնեն նպատակաւարմար խնամելու, կամ գէթ կարելի է այնքան առողջացնել հիւանդին, որ նա դեռ երկար տարիներ աշխատելու ընդունակ լինի: Այս պատճառով էլ որոնց մօտ երևացել են գնդկախտի նշաններ, չպէտք է ուշացնեն բժշկին դիմել:

Գնդկախտի տարածուիլը եւ առաջն առնելու միջոցները. Գնդկախտի միկրոբի գտնելու օրից աւելի շօշափելի եղաւ այս հիւանդութեան տարածման եղանակը: Հնուց յայտնի էր, որ հիւանդութեան տրամագրութիւնը որդիք ժառանգում են ծնողներից և որ պատահական մըրսելը կարող է տրամագրել Թոքախտով հիւանդանալու, բայց այժմս հիւանդութեան տարածման պատճառը որոնում են գլխաւորապէս կենդանի սերմերի փոխադրութեան մէջ: Յայտնի է, որ նոքա գտնւում են հիւանդի արտաթորութեանց մէջ՝ խորխի, թարախի կամ կղկղանքի և երկար ժամանակ, մինչև անգամ չոր ժամանակ՝ վարակիչ յատկութիւնը չեն կորցնում: Այս սերմերը գրտնուել են այն բնակարանների փոշու մէջ, ուր ապրել են Թոքախտաւորներ և շատ անգամ ապացուցուած է, որ մարդիկ վարակւում են հիւանդի հետ մօտ յարաբերութիւն ունենալուց, աւելի ևս միասին ապրելուց: Այնօրից, երբ եղջերաւոր անասունների մարգարտախտը

(ЖЕМЧУЖН. БОЛ.) ճանաչուեցաւ իբրեւ գնդկախտալին հիւանդութիւն, ամենքը համոզուած են, որ հիւանդ կու վերի կաթը կարող է գնդկախտի հիւանդութիւն առաջացնել:

Ուստի անհրաժեշտ է գնդկախտով հիւանդ մարդկանց արտաթորութիւնները ախտահանել և այս նպատակով՝ հետեւեալ պատուէրները կարելի է տալ:

1. Բոլոր մարդիկ և մանաւանդ հիւանդները, անշուշտ պէտք է թքամանում թքեն, ուր ածուում է հեղուկ, որ թոյլ չտալ խորխը փոշեանալու կամ չորանալու, կամ այնպիսի նիւթ, ինչպէս օրինակ՝ խէրխուքս, որ գոնէ օրը մի անգամ պէտք է դատարկել և ախտահանել, իսկ ամենից լաւ է այլել: Ուր անհնարին է թրքաման ունենալ, օր. զբօսանքի ժամանակ, հիւանդները գրպանում աման պիտի ունենան և երբէք գետնին կամ թաշկինակի մէջ չպէտք է թքեն:

2. Հիւանդների գործածած սպիտակեղէնն ու մաններն իսկոյն գործածելուց լիտոյ ամեն անգամ պէտք է եփել: հիւանդի կացարանը պէտք է ախտահանել, նախ քան ուրիշների բնակուելը նորա մէջ:

3. Թոքախտաւորների ապրած բնակարաններում թող չպէտք է լինի, այլ ծանր վարազոյրները, հաստ գորգերն ու այլ իրերը, որոնք հեշտութեամբ թոզոտւում են, պէտք է փոխարինել հարթ և դիւրութեամբ լուացուող կտորներով:

4. Առողջներին չպէտք է թոյլ տալ թոքախտաւորների հետ քնել և այս տեսակներին չի կարելի թոյլատրել ուտելիքի պաշար, ծխախոտ և այլն պատրաստելով ու ծախելով պարապել: Ուր թոքախտաւորները պէտք է աշխատեն առողջների հետ միասին, վարչութիւնը նոցա վերալ պարտք պէտք է դնէ վերոյիշեալ նախապաշտպանութեան միջոցները գործադրել:

5. Անհրաժեշտ է արգելել գնդկախտաւոր կովերի կաթի վաճառումը: Այն կաթը, որի լատկութիւնը ճիշտ յայտնի չէ, առանց եռացնելու չի թոյլատրւում գործածել:

Գնրութեամբ թարգմ. իմ ժող. Ս. ՄԱՅՍ ՈՒՐԵԱՆՑ